



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. h.wugt.abovyan.kotayq@mta.gov.am

07-ը ապրիլի 2023թ.

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Թանկագի՛ն մայրեր.

Ապրիլի 7-ի՝ Մայրության և գեղեցկության օրվա, ինչպես նաև հայ առաքելական եկեղեցու Ս. Մարիամ Աստվածածնի Ավետման տոնի առթիվ ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ:

Մայրությունը կնոջը շնորհված բարձրագույն կոչում է, առաքելություն, որն իր մեջ ամփոփում է անսահման սեր, հոգածություն ու պատասխանատվություն ընտանիքի նկատմամբ: Ամուր ու շեն հայրենիքի, լիարժեք ընտանիքների հիմքում առաքինի, ստեղծարար ու համբերատար հայ մայրերն են՝ արժանի մեծագույն սիրո ու հարգանքի:

Խոնարհումով և երախտագիտությամբ առաջին հերթին շնորհավորում եմ մեր հերոսածին մայրերին, ովքեր դաստիարակել են խիզախ ու հայրենանվեր որդիներ և անփարատելի կարոտով ամենաթանկը տվել մայր հայրենիքին: Նուրբ, կանացի, միևնույն ժամանակ անչափելի ուժեղ ու տոկուն են հայ մայրերը, նրանք համբերատար և իրենց բնորոշ ամուր կամքով հաղթահարում են առօրյա բազում հոգսերն ու բաժին հասած դժվարությունները:

Հայաստան և Արցախ աշխարհի սիրելի՛ մայրեր.

Գարնանային այս գեղեցիկ ու խորիմաստ տոների առթիվ, կրկին շնորհավորելով, մաղթում եմ ձեզ խաղաղ ու երջանիկ մայրություն, եղեք առողջ, անսահման երջանիկ, միշտ սիրված և գնահատված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ